ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/20 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **21 հունիսի 2021թ.**

2021թ-ի հունիսի 9-21-ը ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք հասցեում գտնվող «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ շինարարական աշխատանքների ձեռքբերման ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լ. Ավետիսյան՝	Հիմնադրամի գլխավոր ճարտարագետի տեղակալ,
Ֆ. Բարսեղյան՝	Հիմնադրամի տեխ. բյուրոյի ղեկավար,
Ս. Բաղեյան՝	Հիմնադրամի տեխ. բյուրոյի ճարտարագետ-շինարար,
Ե. Էլբակյան՝	Հիմնադրամի շենք շինությունների գազ. ջր. ծառայության պետ,
Ք. Վարդանյան՝	Հիմնադրամի գլխավոր հաշվապահ

Նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Քնար Ազիբեկյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Ավետիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ք. Ազիբեկյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/20 ծածկագրով գնան ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի, ներկայացված հայտերի բացման, գնահատման, առաջարկված գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/20 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ և ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լ. Ավետիսյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Շինարարական աշխատանքներ	5238420

ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2021 թվականի հունիսի 9-ին, ժամը «14:00»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցե	Էլ. փոստ
1	«ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբ., 8շ., 118բն	hakobyan.construction@mail.ru
2	«ԱՐ-ԱՐ ՇԻՆ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Մ. Խորենացի 15, 1 հարկ A8 գրասենյակ	stepanyan-andranik@rambler.ru
3	«ԷՅՉ ԸՆԴ ԷՅՉ» ՍՊԸ	ք. Երևան, Ավան-Առինջ, 3/5 շ	handh.limitedcompany@gmail.com
4	«ԱԼ ԵՎ ԱՐ» ՍՊԸ	ք. Երևան, Նուբարաշեն 20փ., 20/1, բն. 6	arsho_grigoryan@mail.ru
5	«ՌԻՉ ԿՈՆՍՏՐԱԿՇՆ» ՍՊԸ	ք. Երևան, Ավան Նարեկացի 41-7	rich@groupmail.com
6	«ՇԱԽՈՒԼՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ	Անի թղմ 13 փող. /Շ/1/ Գյումրի 3126 Շիրակ Հայաստան	shaxulyan5488@mail.ru
7	«ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ	ք. Գավառ, Վ. Փոշոտյան 1	hazarashen@gmail.com
8	«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ	ք. Երևան, Շինարարների 10/31	artmashin@mail.ru
9	«ԱՐՔԱ ՍԻՄ» ՍՊԸ	-	-
10	«ՄԵՆԱՐՇԻՆ» ՍՊԸ	ք. Վանաձոր, Տիգրանյան 3/41	narek.khachatryan2017@bk.ru

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը., բացառությամբ «ԱՐՔԱ ՍԻՄ» ՍՊԸ-ի՝ բացակայում են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ այդ թվում գնային առաջարկը, «ՀԱԿՈԲՅԱՆ

ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի՝ բացակայում է հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

3. Ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին., բացառությամբ

• ԱՐ-ԱՐ ՇԻՆ ՍՊԸ-ի՝ ներկայացված ընթացակարգի մասնակցության դիմումում՝ համաձայն հրավերի հավելված 1-ի, բացակայում են սպասարկող բանկի և հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունները, 2)-րդ կետի 2-րդ ենթակետում մասնակցի իրավաբանական կարգավիճակը թերի է լրացված՝ ՍՊԸ-ի փոխարեն ՍՊ, ինչպես նաև ներկայացված հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվի 42 տողով՝ Պատերի, և շեպերի ծեփամածկում, անվանոտողի համար փաստացի նախատեսվել էր 57,14 մ^2 ծավալ, սակայն մասնակցության հայտում ներառված ծավալաթերթ-նախահաշվում լրացվել է 57,4 մ^2, 44 տողով՝ Առաստաղների ներկում լատեքսային ներկով, անվանոտողի համար փաստացի նախատեսվել էր 57,14 մ^2 ծավալ, սակայն մասնակցության հայտում ներառված ծավալաթերթ-նախահաշվում լրացվել է 57,4 մ2 և 84 տողով՝ Փայտե դռների ապամոնտաժում, անվանոտողի համար փաստացի նախատեսվել էր 16,81 մ^2 ծավալ, սակայն մասնակցության հայտում ներառված ծավալաթերթ-նախահաշվում լրացվել է 16,8 մ^2:

• «ՌԻՉ ԿՈՆՍՏՐԱԿՇՆ» ՍՊԸ-ի՝ ներկայացված հաստատված՝ ծավալաթերթ-նախահաշվում հաշվարկները կատարված են հրավերով սահմնված կլորացումների թույլատրելի շեմերի խախտմամբ. օրինակ՝ ծավալաթերթի 1-ին տողում՝ Կոյուղու խողովակների ապամոնտաժում, անվանատողի համար Ընդհանուր արժեքը սյունյակի համար լրացվել է 2930, սակայն փաստացի ստացվում է 2932, միևնույն անհամապատասխանությունը առկա է ծավալաթերթի անվանատողերի մեծամասնության դեպքում և արդյունքում ծավալաթերթի Ընդհանուր արժեքների հանրագումարը՝ 8455070, տարբերվում է փաստացի ստացվող գումարից՝ 8455175,32:

• «ՇԱԽՈՒԼՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի՝ ներկայացված հաստատված՝ ծավալաթերթ-նախահաշվի Ընդամենը դաշտում լրացված արժեքը՝ 4701207, տարբերվում է փաստացի ստացվող արժեքից՝ 4703607: Ծավալաթերթ-նախահաշվի 107-րդ տողով՝ Դռների ներքին շեպերի գաջե սվաղ, անվանոտողում հաշվարկը սխալ է իրականացված՝ միավորի արժեքի և ծավալի բազմապատկման արդյունքում լրացված արժեքը՝ 15000, տարբերվում է փաստացի ստացվող՝ 6600 արժեքից:

• ԱՐԹՄԱՇԻՆ ՍՊԸ-ի՝ ներկայացված ընթացակարգի մասնակցության դիմումում՝ համաձայն հրավերի հավելված 1-ի, հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության և ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սահմանված կարգով և ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության վերաբերյալ պարբերության մեջ մասնակցի անվանումը նշված չէ:

• «ՄԵՆԱՐՇԻՆ» ՍՊԸ-ի՝ հայտում ներառված լիազորագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին՝ մասնավորապես լիազորագիրը տրված է ՀՀ տարածքում հայտարարված գնման ընթացակարգերի փաստաթղթերը էլեկտրոնային կնիքով հաստատելու համար, սակայն գնման ընթացակարգի հրավերով պահանջվում է հայտով ներկայացնել գնման

ընթացակարգին մասնակցության նպատակով մասնակցի կազմված փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

• «ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի՝ ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին՝ հաշվարկը սխալ է իրականացված՝ Արժեք դաշտի և ԱԱՀ դաշտի հանրագումարը՝ Ընդհանուր գինը՝ 6865131 տարբերվում է փաստացի ստացվող՝ 6865132 Ընդհանուր գնից:

• «ԷՅՉ ԸՆԴ ԷՅՉ» ՍՊԸ-ի՝ ընթացակարգի մասնակցության դիմումում՝ համաձայն հրավերի հավելված 1-ի, ընթացակարգի ծածկագիրը սխալ է լրացված՝ ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/20 փոխարեն լրացված է ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/19 և գնային առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին՝ ընթացակարգի ծածկագիրը սխալ է լրացված՝ ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/20 փոխարեն լրացված է ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/19:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

Չափաբաժնի		Մասնակցի			Մասնակիցների առաջարկած գները		
N	Անվանում	անվանում	Զբաղեցրած տեղ	Ընտրված մասնակցի նշում՝ «X»	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1*	Շինարարական աշխատանքներ	«ՄԵՆԱՐՇԻՆ» ՍՊԸ	1	X	2850000	570000	3420000
		«ԱԼ ԵՎ ԱՐ» ՍՊԸ	2		3339938.5	667987.7	4007926.2
		«ԱՐ-ԱՐ ՇԻՆ» ՍՊԸ	3		4532230	906446	5438676
		«ՇԱԽՈՒԼՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ	4		4701207		4701207
		«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ	5		4894317	978863	5873180
		«ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ	6		6046884		6046884
		«ՌԻՉ ԿՈՆՍՏՐԱԿՇՆ» ՍՊԸ	7		7045892	1409178	8455070
		«ԷՅՉ ԸՆԴ ԷՅՉ» ՍՊԸ	-		3997650	799530	4797180
		«ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ	-		5720943	1144189	6865131
		«ԱՐՔԱ ՍԻՄ» ՍՊԸ	-		-	-	-

** Վարվել են բանակցություններ՝ արդյունքները ներկայացված են ստորև*

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.

2. ԱՐՔԱ ՍԻՄ ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2 կետի համաձայն՝ բացակայում է գնային առաջարկը, «ԷՅՉ ԸՆԴ ԷՅՉ» ՍՊԸ-ի և ՀԱԿՈԲՅԱՆ

ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ-ի հայտերը գնահատել անբավարար և մերժել՝ գնային առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին:

3. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցմամբ առաջարկել մասնակիցներին հրավերով սահմանված կարգով իրականացնել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունները և հանձնաժողովին ներկայացնել փաստաթղթերի շտկված տարբերակները:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Մասնակիցների կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետներում իրականացվել են շտկման ենթակա անհամապատասխանությունների շտկումները և ներկայացվել են փաստաթղթերի շտկված տարբերակները:

2. Ներկայացված հայտերը գնահատել բավարար., բացառությամբ ԱՐՔԱ ՍԻՄ ՍՊԸ-ի, «ԷՅՉ ԸՆԴ ԷՅՉ» ՍՊԸ-ի և ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ-ի:

3. Բավարար գնահատված մասնակիցներին ծանուցմամբ հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն, որ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-21/20 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված և հաջորդաբար տեղ զբաղեցնող մասնակիցներին որոշելու նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն, մասնակիցների հետ վարվեցին գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցություններ:

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին մասնակիցների առաջարկները մնացին անփոփոխ:

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Ավետիսյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ֆ. Բարսեղյան _____

Ս. Բաղեյան _____

Ե. Էլբակյան _____

Ք. Վարդանյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ք. Ազիբեկյան _____